6. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 60-օրյա ժամկետում որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպում չկատարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաջիկ Թևոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. ապրիլի 27  
ք. Արուսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 ապրիլի 2021 թվականի N 486

**ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 1-ԻՆ ՄԻԿՐՈՇՐՋԱՆԻ  
ԹԻՎ 7/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ  
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ  
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի և իրավահարաբերության պահին գործող 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, 2006 թվականի մայիսի 26-ի N 1022-Ն և 2007 թվականի օգոստոսի 9-ի N 1036-Ն որոշումների, Արովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 70-Ն և 2021 թվականի հունվարի 26-ի N 06-Ա որոշումների, հաշվի առնելով Վալդոյա Սարգսյանի դիմումը (մուտք՝ 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N Ք-2618) և համաձայնությունը.

1. Արովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2021 թվականի փետրվարի 2-ի N 02022021-07-0105 վկայական) 1-ին միկրոշրջանի թիվ 7/5 հասցեում գտնվող ավտոտնակը՝ 18.0 քառակուսի մետր արտաքին մակերեսով, 15.0 քառակուսի մետր ներքին մակերեսով և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 18.0 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Վալդոյա Սարգսյանին:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 2 100 (երկու հազար հարյուր) դրամ (տարածագնահատման 8-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.21).

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 2 940 (երկու հազար ինը հարյուր քառասուն) դրամ:

4. Վալդոյա Սարգսյանը պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900105201777 հաշվեհամարին՝ 37 800 (երեսունյոթ հազար ութ



հարյուր) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին՝ 52 900 (հիսուներկու հազար ինը հարյուր) դրամ՝ հողամասի գինը.

3) համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին՝ 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման փաստաթղթերի կազմման համար ծառայության վճար, 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Վալոդյա Սարգսյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 60-օրյա ժամկետում որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպում չկատարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վալոդյա Սարգսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. ապրիլի 27

ք. Աբովյան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 ապրիլի 2021 թվականի N 485

**ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 2-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆԻ  
ԹԻՎ 2/395 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ  
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՅՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ  
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հոդային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի և իրավահարաբերության պահին գործող 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, 2006 թվականի մայիսի 26-ի N 1022-Ն և 2007 թվականի օգոստոսի 9-ի N 1036-Ն որոշումների, Արովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 70-Ն և 2021 թվականի հունվարի 26-ի N 06-Ա որոշումների, հաշվի առնելով Արթուր Մեղրյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի հունվարի 21-ի N Ք-97) և համաձայնությունը.

1. Արովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2021 թվականի փետրվարի 8-ի N 08022021-07-0100 վկայական) 2-րդ միկրոշրջանի թիվ 2/395 հասցեում գտնվող ավտոտնակը՝ 19.26 քառակուսի մետր արտաքին մակերեսով, 18.9 քառակուսի մետր ներքին մակերեսով և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 19.26 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Արթուր Մեղրյանին:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հոդային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 2 600 (երկու հազար վեց հարյուր) դրամ (տարածագնահատման 7-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.26).

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 4 524 (չորս հազար հինգ հարյուր քսանչորս) դրամ:

4. Արթուր Մեղրյանը պարտավոր է վճարել.



- 1) համայնքապետարանի 900105201777 հաշվեհամարին՝ 50 100 (հիսուն հազար հարյուր) դրամ՝ ավտոտնակի գինը.
- 2) համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին՝ 87 100 (ութսունյոթ հազար հարյուր) դրամ՝ հողամասի գինը.
- 3) համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին՝ 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման փաստաթղթերի կազմման համար ծառայության վճար, 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:
5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Արթուր Մեղրյանի կողմից:
6. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 60-օրյա ժամկետում որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպում չկատարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արթուր Մեղրյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. ապրիլի 27  
ք. Արմավան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԴՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ապրիլի 2021 թվականի N 484

**ՀԱԿՈՐ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով Հակոբ Հովսեփյանի հայտը (մուտք՝ 2021 թվականի ապրիլի 13-ի N Ք-908)։

1. Հակոբ Հովսեփյանին տալ կիսակառույց բնակելի տան վերակառուցման, նոր բնակելի տան և պարսպի կառուցման նախագծման թույլտվություն (նախագծման թույլտվությունը կցվում է)։
2. Հակոբ Հովսեփյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն։
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հակոբ Հովսեփյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ



2021թ. ապրիլի 26  
ք. Արվյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ  
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ  
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԴԱՆՔ)

N 48 «26» ապրիլի 2021թ.

|                                  |                                                                                                                                                                                                                                                                                         |
|----------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Օբյեկտ                           | կիսակառույց բնակելի տան վերակառուցման, նոր բնակելի տան և պարսպի կառուցում<br>(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, վերանորոգում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)                                                                               |
| Գտնվելու վայրը                   | «Աշխատանքային նախագիծ» (միջինից բարձր, III-րդ կատեգորիա) նախագծային փաստաթղթերի մշակման համար<br>(հակիրճ բնորոշումը, հզորությունը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)                                                                                       |
| Կառուցապատող                     | Հակոբ Հովսեփյան (ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Արուսյան, 8-րդ միկրոշրջան, 4-րդ թաղամաս, թիվ 41 բնակելի տուն, ծածկագիր՝ 07-002-0018-0001)<br>(վարչի, համայնքի, փողոցի անվանումները շենքի համարը, հողամասի ծածկագիրը)                                                                              |
| Առաջադրանքի տրամադրման հիմքը     | Կառուցապատողի հայտը, անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման N 09032021-07-0028 վկայական տրված<br>09.03.2021թ., էսքիզային նախագիծը:<br>(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթեր) |
| Առաջադրանքի գործողության ժամկետը | մեկ ու կես տարի:<br>(ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N1 հավելվածի 31-րդ կետին համապատասխան)                                                                                                                                                                      |

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (\*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

|                                                                                                    |                                                                                                                                                                                                                                       |
|----------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 1. Հողամասը գտնվում է                                                                              | նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման<br>(հողամասի դիրքը բաղադրարկային միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)                                                 |
| 2. (*) Հողամասի չափերը                                                                             | 0.051 հա<br>(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմար, մակերեսը, (հա))                                                                                                                                                            |
| 3. Հողամասի առկա վիճակը                                                                            | Կիսակառույց բնակելի տուն՝ 39.4 քմ<br>(տեխնիկական պայմանագրերի, շենքերի (այդ դեպում՝ բանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարակաբույսերը և այլն) |
| 4. (*) Տրամադրության պայմանները                                                                    | ներդրողի նշանակության ճանաչարհ:<br>(ճանաչարհների առկայությունը, երկաթուղային տրամագծային մասերի մակերեսները և այլն)                                                                                                                   |
| 5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ                                                         | Նախագծվող և կից տարածքներով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ տնորգետնային<br>(ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգերը)      |
| 6. (*) Կից հողամասեր                                                                               | Հարևանությամբ գտնվող բնակելի տներ, հողամասեր և տարածքներ<br>(կից հողատիրույթների անվանումներ և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)                                                                                        |
| 7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) |                                                                                                                                                                                                                                       |
| 8. (*) Հատակագծային սահմանափակումներ                                                               | Հաշվի առնել կից տարածքներում առկա և նախատեսվող կառուցապատումը<br>(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)                                                                                                                           |
|                                                                                                    | (անդամները գործող արտադրական, պաշտպանական օբյեկտների, ինժեներատրամադրության ենթակառուցվածքների և այլն օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)                                                                |

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

(աստղանիշով (\*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

|                                                                                                                                                                                                                                                                                                        |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 9. Դարձարկային նախագծային պահանջներ                                                                                                                                                                                                                                                                    | մշակել նախագիծ՝ Արուսյան քաղաքի 8-րդ միկրոշրջանի 4-րդ թաղամասի թիվ 41 հասցեում գտնվող հողամասում՝ կիսակառույց բնակելի տան վերակառուցում, նոր բնակելի տան և պարսպի կառուցում՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականով տրված հողամասի սահմաններում:<br>(Ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին, առկա բաղադրարկային ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկությունների ձևակերպման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ) |
| 9.1. (*) Օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)                                                                                                                                                                                                                                                    | բաց տարածք                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                      |
| 9.2. (*) հեռավորությունը հարևան հողատիրույթներից (օբյեկտներից) (մետր)                                                                                                                                                                                                                                  | բաց տարածք                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                      |
| 9.3. Թույլատրելի բարձրությունը (մետր)                                                                                                                                                                                                                                                                  | վերակառուցվող բնակելի տուն՝ 7.5 մ, նոր կառուցվող բնակելի տուն՝ 5.0 մ                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                            |
| (սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀԵՆ-11-6.02-2006 «Մեյսնակայուն շինարարություն/նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովում (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն)) |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 |
| 9.4. կառուցապատման խտության գործակիցը                                                                                                                                                                                                                                                                  | համաձայն նորմերի                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                |
| (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)                                                                                                                                                                                                                         |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 |
| 9.5. կառուցապատման տոկոսը                                                                                                                                                                                                                                                                              | մինչև 40 %                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                      |
| (կառուցապատվող (անշարժ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին տոկոսներով) (%)                                                                                                                                                                                                                     |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 |
| 9.6. կանաչապատման տոկոսը                                                                                                                                                                                                                                                                               | 60 % և ավելի                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |
| (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին տոկոսներով) (%)                                                                                                                                                                                                                                  |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 |
| 9.7. այլ պահանջներ                                                                                                                                                                                                                                                                                     | <ul style="list-style-type: none"><li>Հատակագծային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ հաշվի առնելով նորմատիվային պահանջները</li><li>Նախագծով նախատեսվող կիսակառույց բնակելի տան վերակառուցում, նոր բնակելի տան և պարսպի կառուցում</li></ul>                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                   |



10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը  
11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

12. (\*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (\*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում

Կցվում է

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (\*) էլեկտրամատակարարում

Կցվում է

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (\*) գազամատակարարում

Կցվում է

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (\*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը

Կցվում է

(համաձայն ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

12.5. բույլ հոսանքներ

12.6. աղբահանություն

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

Կազմակերպել տարածքի ջրահեռացում:

(տեխնիկական կազմակերպման, քարտեզման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում

Ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել

(բանջարատային պլանավորման վերաբերյալ պահանջներ, կանաչապատում, ճարտարապետական փուլը ձևեր, ցանկացված, գոծազդ և այլն)

15. Շինարարական նյութեր

(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ

(արտակարգ իրավիճակներում մարդկանց օրյակետերի պաշտպանության միջոցառումները)

Ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները

(հավանությունը անվտանգության սպասվող միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

ապահովել հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժը

19. Շրջակա միջավայրի պահպանում

ապահովել շրջակա միջավայրի պահպանման համապատասխան միջոցառումները

(շրջակա միջավայրի վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում

(տնտեսագիտություն, շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառում, բաղադրյալ - տնտեսության և արտադրատի անվտանգ աշխատանքի սպասվող վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

մեկ ու կես տարի ճարտարապետական մաս և կոնստրուկտիվ մաս

(Ըշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

Լ Բ Ա Ց Ո Ւ Ց Ի Չ Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր Ը

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015թ. «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տևաժը կամ նախագծի կառուցապատման համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

Համաձայնեցում Արուսյան համայնքի ղեկավարի հետ

(իրավաբան մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, եշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումներ

• Համաձայնեցում Արուսյան համայնքի ղեկավարի հետ:

• Մինչև նախագծային աշխատանքները սկսելը համաձայնություն ձեռք բերել տվյալ ինժեներական ենթակառուցվածքների սեփականատերերի (օգտագործողների) հետ

• Համաձայնեցում հարևան հողամասի սեփականատեր(երի) (օգտագործող(ներ)) հետ

(եշվում են տվյալ օրյակետի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

27. Այլ պայմաններ

- Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները և ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. հ.273-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հ.128-Ն հրամանով հաստատված դրույթներին:
- Նախագիծը ներկայացնել համաձայնեցման երկու օրինակից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐԴՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Կ. Գևորգյան

ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ







ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԴԱՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

26 ապրիլի 2021 թվականի N 483

**ԷԹԵՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով Էթերա Վարդանյանի հայտը (մուտք՝ 2021 թվականի ապրիլի 12-ի N Ք-894)։

1. Էթերա Վարդանյանին տալ պարսպի կառուցման նախագծման թույլտվություն (նախագծման թույլտվությունը կցվում է)։
2. Էթերա Վարդանյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն։
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էթերա Վարդանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. ապրիլի 26  
ք. Արթվյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ  
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ  
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 47 «26» ապրիլի 2021թ.

|                                                                                                                                                                           |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              |
|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Օբյեկտ                                                                                                                                                                    | պարսպի կառուցում<br>(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, վերանորոգում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                             |
| Գտնվելու վայրը                                                                                                                                                            | «Աշխատանքային նախագիծ» (միջին ռիսկայնության, II-րդ կատեգորիա) նախագծային փաստաթղթերի մշակման համար<br>(հակիրճ բնորոշումը, հզորությունը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)                                                                                                                                                                                                                                                                                                                                                                       |
| Գտնվելու վայրը                                                                                                                                                            | ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Արովյան, 5-րդ միկրոշրջան, 1-ին թաղամաս, 53 հողամաս, ծածկագիր՝ 07-002-0039-0809<br>(մարզի, համայնքի, փողոցի անվանումները շենքի համարը, հողամասի ծածկագիրը)                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                               |
| Կառուցապատող                                                                                                                                                              | Էթերա Վարդանյան (ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Արովյան, Գառնի փ., 6 շ., 31 բն., հեռ. 37493702510)<br>(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)                                                                                                                                                                                                                                                                                                                                             |
| Առաջադրանքի տրամադրման հիմքը                                                                                                                                              | Կառուցապատողի հայտը, անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման N 21032019-07-0097 վկայական տրված<br>21.03.2019թ., Էսքիզային նախագիծը:<br>(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթեր)                                                                                                                                                                                                                                                                                      |
| Առաջադրանքի գործողության ժամկետը                                                                                                                                          | մեկ տարի:<br>(ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N1 հավելվածի 31-րդ կետին համապատասխան)                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                  |
| Ն Ա Ն Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Ա Ս Մ Ա Ս Ի Բ Ն ՈՒԹ Ա Գ Ի Ր Ը<br>(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)   |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              |
| 1. Հողամասը գտնվում է                                                                                                                                                     | նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման<br>(հողամասի դիրքը բաղադրաչինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                       |
| 2. (*) Հողամասի չափերը                                                                                                                                                    | 0.0525 հա<br>(հողամասի սահմանները կոորդինատային նշանարմամբ, մակերևույթ, (հա))                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                |
| 3. Հողամասի առկա վիճակը                                                                                                                                                   | անբարեկարգ<br>(տեխնիկ բնորակվող, շենքերի (այդ թվում՝ ջանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)                                                                                                                                                                                                                                                                                                                                                                         |
| 4. (*) Տրանսպորտային պայմանները                                                                                                                                           | ներքաղաքային նշանակության ճանապարհ:<br>(ճանապարհների սովորությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                             |
| 5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ                                                                                                                                | Նախագծվող և կից տարածքներով անցնող ինժեներական գծեր և հաղորդակցություններ:<br>(ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)                                                                                                                                                                                                                                                                                                                                                              |
| 6. (*) Կից հողամասեր                                                                                                                                                      | Հարևանությամբ գտնվող բնակելի տներ, հողամասեր և տարածքներ<br>(կից հողատիրույթների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված պլանային)                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                |
| 7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)                                                                        | <br>(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                               |
